ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ» ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

h/h	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Հայկ Մարտիրոսյան 25.05.2024 20:06:47	Նախագիծը լավն է, սակայն պետք է ներառել ՀՀ բոլոր սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերը և Վայոց Ձորը, քանի որ հենց տվյալ բնակավայրերին են առաջնային անհրաժեշտ նմանատիպ ծրագրերը: Բարձր լեռնային և սահմանամերձ ցանկացած բնակավայր ունի բնակչության պահպանման խնդիր և նմանատիպ ծրագրերը կնպաստեն վերոնշյալ գյուղերի պահպանմանը	Ծրագիրը փորձնական է, որի հաջող ավարտին կհաջորդի ամբողջական լիարժեք ծրագիր, որում կընդգրկվի նաև Վայոց Ձորի մարզը:	
2	Զոհրաբ Խաչատրյան 15.05.2024 17:00:32	Նախագիծը լավն է, սակայն մեղվաբուծությամբ առաջին անգամ զբաղվող և փորձ չունեցող անձանց դեպքում մեղուների անկման ռիսկը շատ մեծ է և չպետք է դրանց վերականգման ամբողջ պատասխանատվությունը դնել այդ	Արդեն իսկ Հայաստանի Հանրապետությունում գործում են հասարակական կազմակերպություններ և գիտաարտադրական կենտրոներ որոնք զբաղվում են նշված գործունեությամբ:	

		անձանց վրա: Շահառու համարվող անձանց համար առաջարկում եմ նաև համապատասխան դասընթացներ կազմակերպել մեղուների խնամքի և այլնի հետ կապված, որպեսզի կարողանան հասկանալ մեղուների խնամքի, պահպանության, իրականացվող բուժումների անհրաժեշտության վերաբերյալ հարցերը և ճիշտ կազմակերպեն այն: Հակառակ դեպքում ծրագիրը անհամաչափ վնաս կարող է հասցնել ծրագրի շահառուներին:		